ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

ԽՆ-894[6]-09.03.2021,06.05.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 5-րդ մասում «քաղաքական չեզոքություն» բառերից հետո լրացնել «, քաղաքական զսպվածություն» բառերը:

Հոդված 2. Օրենքի 27-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով.

«3. Հանրային ծառայողն իր ծառայողական պարտականությունները կատարելիս իրավունք չունի կրելու կուսակցական պատկանելությունը խորհրդանշող նշաններ»:

Հոդված 3. Օրենքը լրացնել 27.1-ին հոդվածով.

«Հոդված 27.1. Հանրային ծառայողների քաղաքական գործունեությունը

1. Հանրային ծառայողները պարտավոր են ցանկացած հանգամանքներում դրսևորել քաղաքական զսպվածություն:

2. Հանրային ծառայողների քաղաքական գործունեությունը չպետք է կասկածի տակ դնի հանրային ծառայության անկողմնակալությունը:

3. Հանրային ծառայողներն իրավունք ունեն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգով մասնակցելու նախընտրական քարոզչությանը՝ պահպանելով քաղաքական զսպվածությունը:

4. Հանրային ծառայողները քաղաքական կամ հանրային քննարկումներին, միջոցառումներին, այդ թվում՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելիս իրավունք չունեն հանդես գալ ի պաշտոնե կամ նշել իրենց պաշտոնեական դիրքի, կոչման մասին կամ որևէ կերպ օգտագործել պաշտոնի հեղինակությունը որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի օգտին:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթը չի կիրառվում ընտրություններին որպես թեկնածու հանդես եկող հանրային ծառայողների նկատմամբ:

6. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ծառայողի՝ որպես պաշտոնատար անձի մասնակցությունը քաղաքական բնույթի քննարկումներին պետք է կրի բացառապես տեղեկատվական բնույթ և արտահայտի պաշտոնական դիրքորոշումը:

Հոդված 4. Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «ոչ ծառայողական» բառերից հետո լրացնել «այդ թվում՝ նախընտրական քարոզչության» բառերը:

Հոդված 5. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից: